Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի
Վանաձորի գրասենյակ

OPEN SOCIETY
FOUNDATIONS

ՏԵՂԵԿԱՆՔ

2017 Թ. ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ
ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԵՎ ԼՂ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿՈՒՄ
ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

ՎԱՆԱՁՈՐ
2017

Սույն զեկույցը պատրաստվել է Բաց հասարակության հիմնադրամների ֆինանսական աջակցությամբ:

Սույն զեկույցի մեջ արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղինակներինն են և հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2017 թ.-ի հունվար-մարտ ամիսների ընթացքում մահացությունների վերաբերյալ տվյալները հավաքագրվել են զանգվածային լրատվամիջոցներով եւ պաշտոնական աղբյուրներով տարածված, ինչպես նաև մահացած զինծառայողների հարազատների կողմից տրամադրված տեղեկություններից:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ 2017 թ-ի հունվար-մարտ ամիսների ընթացքում ՀՀ զինված ուժերում և ԼՂ պաշտպանության բանակում մահացել է **16 շարքային և պայմանագրային զինծառայող:** Մահացության **16** դեպքից **8-ը** հրադադարի ռեժիմի խախտման հետեւանքով են, **2-ը՝** սպանության (զենքի հետ վարվելու կանոնների խախտում), **2-ը՝** դժբախտ պատահարների (1-ը՝ ավտովթարի, 1-ը՝ շմոլ գազից թունավորման), **1-ը՝** ինքնասպանության կամ ինքնասպանության հասցնելու և **1-ը՝** առողջական խնդիրների հետևանքով, եւս **1** դեպք տեղի է ունեցել դեռևս չբացահայտված հանգամանքներում:
Նշված բոլոր 16 դեպքերի վերաբերյալ կան պաշտոնական հաղորդագրություններ: Արձանագրված բոլոր դեպքերում զինծառայողները գտնվել են ծառայության մեջ:

Հարկ է նշել, որ 2016թ-ի նույն ժամանակահատվածում եւս գրանցվել է **մահացության 16 դեպք, որոնցից 3-ը տեղի է ունեցել հրադադարի ռեժիմի խախտման, 3-ը՝ սպանության (1-ը՝ դիտավորյալ, 1-ը՝ կանոնադրային հարաբերությունների խախտում, 1-ը՝ անհայտ պայմաններում), 5-ը՝ դժբախտ պատահարի (4-ը՝ ավտովթար, 1-ը՝ հոսանքահարում), 5-ը՝ ինքնասպանության կամ ինքնասպանության հասցնելու հետևանքով:**

Ինչպես տեսնում ենք, 2017 թ-ին հրադադարի ռեժիմի խախտման հետեւանքով մահվան դեպքերը մոտ երեք անգամ աճել են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ /տե՛ս գծապատկեր 1, աղյուսակ 1/, իսկ սպանության եւ ինքնասպանության դեպքերը նվազել են, համապատասխանաբար 1-ով եւ 4-ով:

Այսպիսով՝ սպանության եւ ինքնասպանության ընդհանուր թիվը 2016 թ-ի նույն ժամանակահատվածում 8 էր, իսկ 2017 թ-ին՝ 3:

Գծապատկեր 1 . 2011-2017թթ. առաջին եռամսյակում հրադադարի ռեժիմի խախտման ընթացքում արձակված կրակոցների քանակը և մահացության թիվը



Աղյուսակ 1. 2011-2017թթ. առաջին եռամսյակում մահացության մեկ դեպքի հաշվարկով հրադադարի ռեժիմի խախտումների և արձակած կրակոցների թիվը

Տարեթիվ	Հրադադարի ռեժիմի խախտման քանակը[1] մեկ մահվան դեպքի հաշվարկով	Արձակված կրակոցների թիվը մեկ մահվան դեպքի հաշվարկով	Հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով մահացությունների թիվը
2011	738	3683	3
2012	590	2500	5
2013	1730	7300	2
2014	1417	10475	4
2015	786	11473	19
2016	–[2]	33800	3
2017	393	5432	8

[1] Հրադադարի ռեժիմի խախտումների քանակի մասին տվյալները հասանելի են միայն 2011-2015 թթ. և 2017թ. համար

[2] Հրադադարի ռեժիմի խախտումների քանակի մասին տվյալները հրապարակվել են ԼՂ ՊԲ պաշտոնական կայքում: Մինչ այժմ ներկայացվել է հրադադարի ռեժիմի խախտումների քանակը, իսկ 2015 թ. դեկտեմբերի 18-ից ի վեր նշվում է միայն արձակված կրակոցների թիվը: Հետևաբար այդ ժամանակահատվածից հետո հնարավոր չէ ներկայացնել հրադադարի ռեժիմի խախտումների մասին տեղեկատվությունը: Այդ պատճառով, տեղեկանքում այդ ժամանակահատվածի համար ներկայացվում են արձակված կրակոցների թվի վերաբերյալ տվյալները:

Եթե դիտարկենք 2011-2017թթ. առաջին եռամսյակների ընթացքում հրադադարի խախտման հետևանքով մահացության մեկ դեպքին ընկնող հրադադարի ռեժիմի խախտումների թիվը /տե՛ս աղյուսակ 1/, նկատում ենք, որ 2017 թ. մահվան մեկ դեպքին ընկնող հրադադարի ռեժիմի խախտման թիվը անհամեմատ նվազել է, սակայն մահացությունների թիվը նախորդ տարվա համեմատ աճել է: Այս ցուցանիշի հիման վրա կարելի է կարծիք կազմել մարտական հերթապահության անվտանգության կանոնների ոչ պատշաճ պահպանման և անվտանգության միջոցների ոչ բավարար մակարդակի մասին:

Մահացության դեպքերի վիճակագրական տվյալները և նկարագրությունը

2017թ. հունվար–մարտ ամիսների ընթացքում մահացած 16 զինծառայողներից 7-ը պայմանագրային զինծառայողներ են, իսկ 9-ը՝ պարտադիր ժամկետային զինծառայողներ:

16 մահվան փաստերի դեպքում առկա է պաշտոնական հաղորդագրություն, ընդ որում տեղեկատվության տարածման առաջնային աղբյուր հանդիսացել են ԼՂ_Պաշտպանության նախարարության պաշտոնական կայքը[3] և ՀՀ Քննչական կոմիտեի պաշտոնական կայքը[4]:

Մահացության դեպքերից 4-ը տեղի են ունեցել Հայաստանի Հանրապետության տարածքում, 12-ը՝ Լեռնային Ղարաբաղում:

Մահվան դեպքերից մեկը տեղի է ունեցել 2016 թ-ի ընթացքում, զինծառայողը վիրավորվել է,իսկ մահացել է 2017-ի հունվարին, իսկ 1-ը տեղի է ունեցել 2017թ-ի հունվարի 16-ին, զինծառայողը վիրավորվել է, մահացել է 2017թ-ի մարտի 1-ին:

Մահացության բոլոր 16 դեպքերում էլ ՀՀ Զինվորական քննչական գլխավոր վարչության կողմից հարուցվել է քրեական գործ: Բոլոր գործերը գտնվում են նախաքննության փուլում:

Հարուցված քրեական գործերի բաշխումն ըստ
ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածների

- 8-ը՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետ հատկանիշներով սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով:
- 1-ը՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով, սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը:
- 1-ը՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 2-րդ մասով, Զենքի հետ վարվելու կանոնները խախտելը:
- 1-ը՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 3-րդ մասով, զենքի հետ վարվելու կանոնները խախտելը, սպանություն:

[3] http://www.nkrmil.am/main/
[4] http://investigative.am/home.html

- 1-ը՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 377-րդ հոդվածի 2-րդ մասով, մարտական, հատուկ կամ տրանսպորտային մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ:
- 2-ը ՀՀ Քրեական օրենգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մասով, անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ, եթե անզգուշությամբ առաջացրել են ծանր հետևանքներ:

Գրանցված մահվան (առողջական խնդրի հետևանքով) դեպքերից մեկի վերաբերյալ առկա տեղեկատվությամբ չի նշվում, թե քրեական օրենսգրքի որ հոդվածով է հարուցվել քրեական գործը:[5]

Մեկ այլ դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի պաշտոնական կայքէջով տարածված հայտարարության համաձայն՝ երկրորդ կայազորային քննչական բաժնում քննություն է տարվում, սակայն կրկին նշված չէ, թե քրեական օրենսգրքի որ հոդվածով:[6]

2015 թ-ից ի վեր ԼՂ ՊՆ մամուլի ծառայության կողմից տարածված հաղորդագրություններում առկա է Ադրբեջանի Հանրապետության զինուժի կողմից կիրառվող զինատեսակների և դրանց քանակի մասին տեղեկատվություն:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը փորձել է նաեւ ուսումնասիրել հրադադարի ռեժիմի խախտման ժամանակ կիրառված զինատեսակների և դրանց կիրառման քանակի մասին տեղեկատվությունը:

1992 թվականից գործող Սովորական սպառազինությունների[7] ՄԱԿ-ի Ռեգիստրում ներառված են սպառազինությունների յոթ կատեգորիաներ, որոնց արտահանման եւ ներմուծման վերաբերյալ տարբեր երկրներ ներկայացնում են իրենց ամենամյա տվյալները: Այդ կատեգորիաներն են՝

1. մարտական տանկեր,
2. մարտական զրահամեքենաներ,
3. մեծ տրամաչափի հրետանի,
4. մարտական ինքնաթիռներ,
5. հարվածային ուղղաթիռներ,
6. ռազմանավեր
7. հրթիռներ

Հակառակորդի կողմից 2017թ. հունվար-մարտ ամիսների ընթացքում կիրառված զինատեսակները (հրետանի, հրթիռահրետանային կայանք) ներառված են ՄԱԿ-ի սովորական սպառազինությունների ցանկում:

Ստորև ներկայացվում է 2017 թ-ի առաջին եռամսյակի ընթացքի համար նշված ամփոփ տվյալները /տե՛ս աղյուսակ 2/:

---

[5] http://www.azatutyun.am/a/28262347.html
[6] http://investigative.am/news/view/lernik-osyan.html
[7] https://unoda-web.s3.amazonaws.com/wp-content/uploads/2013/06/English7.pdf

Աղյուսակ 2. 2016 և 2017 թվականներիների առաջին եռամսյանկների ընթացքում Ադրբեջանի Հանրապետության կողմից հրադադարի ռեժիմի խախտման ժամանակ կիրառված զինատեսակները և դրանց կիրառման քանակը

Հրադադարի ռեժիմի խախտման ժամանակ կիրառված զինատեսակները				
	Զինատեսակի կիրառման քանակը 2016 թ.	**Կիրառված արկերի քանակը**	**Զինատեսակի կիրառման քանակը 2017 թ.**	**Կիրառված արկերի քանակը**
Նռնականետներ	**27**	**127**	**7**	**6**
ՌՊԳ-7	8	57 արկ	-	-
ՀԱՆ-17	16	100 արկ	3	3 արկ
ԳՊ-25	1	6 արկ	-	-
ԶՀՆ-7	-	-	2	2 արկ
ՀՀՆ-9	2	2 արկ	2	1 արկ
Ականանետներ (հրետանի)	**28**	**402**	**30**	**552**
60 մմ-ոց	16	216 արկ	9	99 արկ
60 և 82 մմ-ոց	4	61 արկ	16	407 արկ
60, 82 և 120 մմ – ոց	-	-	1	21 արկ
82 մմ-ոց	8	125 արկ	5	34 արկ
122 մմ-ոց Դ-30	-	-	1	77 արկ
Հրաձգային զինատեսակներ	**4**		**6**	
ԱԿ	1	հայտնի չէ	-	-
ՍՎԴ	1	հայտնի չէ	2	հայտնի չէ
"Սև նետ"	-	-	1	հայտնի չէ
Իստիգլալ	1	հայտնի չէ	3	հայտնի չէ
ԴՇԿ	1	հայտնի չէ	-	-
Ռեակտիվ հրթիռահրետանային կայանք	**2**	**49**	**2**	**5**
TR-107	2	49 արկ	2	5 արկ

Հարկ է նշել, որ ԼՂ ՊՆ տարածած պաշտոնական հաղորդագրություններում հիմնականում նշվում է կիրառված զենքերի տեսակները, սակայն շատ հաճախ չի նշվում կիրառված արկերի քանակը:

Կարելի է նկատել, որ Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերը առավել հաճախ կիրառել են 60 և 82 մմ տրամաչափով ականանետներ և տարբեր տեսակի նռնականետներ: Կիրառվել են նաև տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներ, սակայն ԼՂ ՊՆ պաշտոնական կայքը իր հաղորդագրությունների մեջ հիմնականում չի նշել վերջիններիս տեսակը:

Հարկ է նշել, որ որոշ զինատեսակներ, օրինակ՝ ՁՀՆ-7 նռնականետ, 122մմ-ոց Դ-30 ականանետ, Սև նետ հրաձգային զենք, որոնք օգտագործվել են 2017թ-ին առաջին եռամսյակում, չեն օգտագործվել 2016թ-ի նույն ժամանակահատվածում, և հակառակը, օրինակ՝ ՌՊԳ-7, ԳՊ-25 նռնականետներ, ԱԿ և ԴՇԿ հրաձգային զինատեսակները, որոնք օգտագործվել են 2016թ-ի առաջին եռամսյակում, չեն օգտագործվել 2017թ-ի նույն ժամանակահատվածում:

Կարող ենք փաստել, որ սովորական սպառազինությունների մասին պայմանագիրը խախտվում է՝ գերազանցելով պայմանագրով սահմանափակված մի շարք տեսակի սպառազինությունների ձեռք բերման քանակը վկայում է տարածաշրջանում լարվածության աճի մասին:

Ստորև ներկայացվում են մահացության դեպքերի վիճակագրական տվյալները 2017 թ. հունվար-մարտ ամիսների համար դեպքերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը և դեպքերի նկարագրությունները /տե՛ս աղյուսակ 3/:

Աղյուսակ 3. ՀՀ զինված ուժերում եւ ԼՂ պաշտպանության բանակում 2017 թ-ին մահացության դեպքերի վիճակագրությունը ըստ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ուսումնասիրության

Ամիս	Հրադադարի ռեժիմի խախտում	Դեռևս չպարզված հանգամանքներ	Ինքնասպանություն/հասցնել	Անփույթ վերաբերմունք ծառայության նկատմամբ	Սպանություն	Դժբախտ պատահար		Առողջական խնդիրներ	Միջադեպերի քանակը	Ընդամենը
					Զենքի հետ վարվելու կանոնների խախտում	Ավտովթար	Թռուցիկորում շվոր գազից			
Հունվար	3		1		1			1	7*	**7**
Փետրվար	2	1		1		1	1		6	**6**
Մարտ	3				1				3*	**3**
Ընդամենը	**8**	**1**	**1**	**1**	**2**	**1**	**1**	**1**	**16**	**16**

Գծապատկեր 2. 2017թ. հունվար-մարտ ամիսների ընթացքում մահացությունների պատճառները



Գծապատկեր 3. 2017թ. հունվար-մարտ ամիսների ընթացքում մահացությունների թիվն ըստ վայրի



Մահացության դեպքերի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն

Աղյուսակ 4.

Հ/Հ	Անուն Ազգանուն	Դեպքի տարեթիվը	Դեպքի տարածաշրջան	Դեպքի վայրը (քաղաք, գյուղ, հոսպոտալ, ճանապարհահատվածՕ...)/ առկայության դեպքում՝ մահվան վայրը (հոսպիտալ ...)	Տեղեկատվության տարածման առաջնային աղբյուրը	Քրեական գործ հարուցող մարմին	ՀՀ քրեական օրենսգրքի որ հոդվածով	Քրեական գործի պաշտոնական որակումը	Դեպքի պատճառը	Որ փուլում է գտնվում գործը
1	Գարիկ Արտաշեսի Վարդանյան	15.01.2017	ՀՀ	ՀՀ ՊՆ կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ/ զինծառայողը վիրավորվել է 2016 թ-ի դեկտեմբերի 30-ին հակառակորդի կողմից արձակված կրակոցից	ԼՂ ՊԲ	1-ին կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետ	Ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով սպանություն կատարելը	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն
2	Արայիկ Իգորի Սարգսյան	16.01.2017	ԼՂ	ՊԲ հարավարևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամաս	ԼՂ ՊԲ	2-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 3-րդ մաս	Զենքի հետ վարվելու կանոնները խախտելը	Սպանություն/զենքի հետ վարվելու կանոնների խախտում	Նախաքննություն
3	Անդրանիկ Սմբատի Մուսիկյան	18.01.2017	ԼՂ	ՊԲ հարավային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի	ԼՂ ՊԲ	2-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ	Ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն

				պահպանության տեղամաս			կետ	կրոնական մոլեռանդության շարժառիթով սպանություն կատարելը		
4	Կարեն Մարատի Ուլուբաբյան	22.01.2017	ԼՂ	ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում	ԼՂ ՊԲ		ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետ	Ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով սպանություն կատարելը	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն
5	Շավարշ Հակոբի Գալստյան	25.01.2017	ՀՀ	ՀՀ ՊՆ N զորամասի պահպանության տակ գտնվող մարտական դիրք	ՀՀ Քննչական կոմիտե	ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչություն	ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մաս	Ինքնասպանության հասցնել	Ինքնասպան ություն	Նախաքննություն
6	Սարգիս Սամվելի Ափինյան	26.01.2017	ՀՀ	ՀՀ ՊՆ N զորամաս	ՀՀ ՊՆ	ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳՎ չորրորդ կայազորային քննչական բաժին			Առողջական	Նախաքննություն
7	Գոռ Համազասպի Գարեգինյան	06.02.2017	ԼՂ	ՊԲ հյուսիսարևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամաս	ԼՂ ՊԲ	3-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետ	Ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով սպանություն	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն

								կատարելը		
8	Գեղամ Հենրիկի Մանուկյան	08.02.2017	ԼՂ	ՊԲ հյուսիսային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամաս	ԼՂ ՊՆ	3-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետ	Ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով սպանություն կատարելը	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն
9	Գարեգին Հակոբի Մինասյան	15.02.2017	ՀՀ	ՀՀ ՊՆ N զորամասի մարտական դիրք տանող ճանապարհը մաքրելիս ձորն է գլորվել զորամասին պատկանող T-170 բուլդոզերը	ՀՀ Քննչական կոմիտե	ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳՎ հինգերորդ կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 377-րդ հոդվածի 2-րդ մաս	Մարտական, հատուկ կամ տրանսպորտային մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ:	Դժբախտ պատահար/ ավտովթար	Նախաքննություն
10	Գարեգին Արայի Արզամանյան	17.02.2017	ԼՂ	ՊԲ կենտրոնական ենթակայության զորամասերից մեկի մշտական տեղակայման վայրում՝ մարտկոցների լիցքավորման պահեստ	ԼՂ ՊԲ	1-ին կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մաս	Անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ, եթե անզգուշությամբ առաջացրել են ծանր հետևանքներ	Դժբախտ պատահար/ թունավորում	Նախաքննություն
11	Լեոնիկ Ալեքսանդրի Օսյան	18.02.2017	ԼՂ	ՊԲ հարավային ուղղության զորամասերից մեկի	ԼՂ ՊԲ	2-րդ կայազորային քննչական բաժին			Դեռևս չպարզված հանգամանք	Նախաքննություն

				պահպանության տեղամաս					ներ	
12	Գոռ Ֆրունզիկի Խուդինյան	23.02.2017	ԼՂ	ՊԲ հյուսիսային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամաս	ԼՂ ՊԲ	3-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մաս	Անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ, եթե անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ	Անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ	Նախաքննություն
13	Նվեր Յուրիկի Բաբաջանյան	01.03.2017	ԼՂ	ՊԲ հարավարևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամաս	ԼՂ ՊԲ		ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետ	Ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով սպանություն կատարելը	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն
14	Գուրգեն Հարությունի Սարգսյան	01.03.2017	ԼՂ	ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում	ԼՂ ՊԲ	1-ին կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 2-րդ մաս	Զենքի հետ վարվելու կանոնները խախտելը	Սպանություն/զենքի հետ վարվելու կանոնների խախտում	Նախաքննություն
15	Արտակ Էդիկի Ռաֆայելյան	28.03.2017	ԼՂ	ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում	ԼՂ ՊԲ	1-ին կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետ	Ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով սպանություն	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն

								կատարելը		
16	Գոռ Գևորգի Հովհաննիսյան	31.03.2017	ԼՂ	ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում	ԼՂ ՊԲ		ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետ	Ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով սպանություն կատարելը	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն

2017 Թ. ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Հրադադարի ռեժիմի խախտում

1. **Գարիկ Արտաշեսի Վարդանյան**

2017 թ-ի հունվարի 15-ին՝ ժամը 23:35-ին, Երևանի կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալում մահացել է 2016թ. դեկտեմբերի 30-ին հակառակորդի կողմից ծանր վիրավորում ստացած զինծառայող, 1996թ. ծնված Գարիկ Արտաշեսի Վարդանյանը:[8]

2016թ-ի դեկտեմբերի 30-ին Ադրբեջանի զինված ուժերի կողմից ղարաբաղա-ադրբեջանական շփման գծի հյուսիս-արեւելյան ուղղությամբ հրադադարի ռեժիմը խախտելու հետեւանքով ծանր վիրավորվել էր ԼՂՀ պաշտպանության բանակի ժամկետային զինծառայող Գարիկ Վարդանյանը: Նրան Ստեփանակերտի զինվորական հոսպիտալից ուղղաթիռով տեղափոխել են Երեւան:[9]

ՀՀ զինվորական քննչական գլխավոր վարչության առաջին կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով սպանություն կատարելու դեպքի առթիվ: Կատարվում է նախաքննություն:[10]

2. **Անդրանիկ Սմբատի Մուսիկյան**

2017թ-ի հունվարի 18-ին՝ ժամը 14:00-ի սահմաններում, ՊԲ հարավային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում, հակառակորդի կողմից արձակված կրակոցից մահացու հրազենային վիրավորում է ստացել զինծառայող 1997թ. ծնված Անդրանիկ Սմբատի Մուսիկյանը:[11]

ՀՀ երկրորդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով սպանություն կատարելու դեպքի առթիվ, կատարվում է նախաքննություն:[12]

Անդրանիկ Մուսիկյանը Գեղարքունիքի մարզի Գեղհովիտ գյուղի բնակիչ էր, ընտանիքի փոքր տղան էր, ուներ 2 ավագ եղբայր:[13]

3. **Կարեն Մարատի Ուլուբաբյան**

2017թ-ի հունվարի 22-ին՝ ժամը 23:25-ի սահմաններում, ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում

---

[8] http://nkrmil.am/news/view/1685
[9] https://news.am/arm/news/367787.html
[10] http://investigative.am/news/view/zinvor-koma-mah-hakarakord.html
[11] http://nkrmil.am/news/view/1689
[12] http://investigative.am/news/view/andranik-musikyan.html
[13] https://news.am/arm/news/368319.html

հակառակորդի կողմից հրադադարի ռեժիմի խախտման արդյունքում մահացու վիրավորում է ստացել պայմանագրային զինծառայող, 1995թ. ծնված Կարեն Մարատի Ուլուբաբյանը:[14]

ՀՀ առաջին կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով սպանություն կատարելու դեպքի առթիվ, կատարվում է նախաքննություն:

Կարեն Ուլուբաբյանի հայրն ու հորեղբայրը նույնպես զոհվել են Մարտունիում՝ Արցախյան պատերազմի ժամանակ, ԼՂՀ Մարտունի քաղաքից էր: Նա բազմազավակ ընտանիքի ավագ որդին էր, իրենից բացի ուներ 2 եղբայր և 2 քույր:[15]

4. Գոռ Համազասպի Գարեգինյան

2017թ-ի փետրվարի 6-ին՝ ժամը 11:00-ի սահմաններում, ՊԲ հյուսիսարևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում հակառակորդի կողմից հրադադարի ռեժիմի խախտման արդյունքում մահացու վիրավորում է ստացել ՊԲ զինծառայող, 1997թ. ծնված Գոռ Համազասպի Գարեգինյանը: [16]

ՀՀ երրորդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ հակառակորդի կողմից պարտադիր ժամկետային զինծառայողի սպանության դեպքի առթիվ:[17]

Գոռ Գարեգինյանի ծնողներն ու եղբայրները բնակվում են Ռուսաստանի Դաշնությունում: Զոհված զինծառայողի ընտանիքը նախկինում բակվել է տնակում և սոցիալապես անապահով են եղել: [18]

5. Գեղամ Հենրիկի Մանուկյան

2017թ-ի փետրվարի 8-ին՝ ժամը 11:00-ի սահմաններում, ՊԲ հյուսիսային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում, հակառակորդի կողմից հրադադարի ռեժիմի խախտման արդյունքում մահացու վիրավորում է ստացել ՊԲ պայմանագրային զինծառայող, 1979թ. ծնված Գեղամ Հենրիկի Մանուկյանը: [19]

ՀՀ երրորդ կայազորային քննչական բաժնում հարուցվել են քրեական գործեր՝ հակառակորդի կողմից հայկական զինված ուժերի պայմանագրային զինծառայողի սպանության, ժամկետային զինծառայողին սպանելու փորձ կատարելու դեպքերի

---

[14] http://nkrmil.am/news/view/1696
[15] http://www.tert.am/am/news/2017/01/23/Karen-Ulubabyan/2256917
[16] http://nkrmil.am/news/view/1718
[17] http://investigative.am/news/view/gor-gareginyan.html
[18] http://henaran.am/254558.html
[19] http://nkrmil.am/news/view/1723

առթիվ:[20]

Զինծառայող Գեղամ Մանուկյանը շուրջ 20 տարի ծառայում էր բանակում, Մարտակերտից էր, ամուսնացած էր, երեխաներ ուներ:[21]

6. Նվեր Յուրիկի Բաբաջանյան

2017թ-ի մարտի 1-ին ժամը 16:50-ի սահմաններում հակառակորդի կողմից ձեռնարկված արկակոծության արդյունքում, շփման գծի հարավարևելյան (Մարտունի) հատվածում բեկորային մահացու վիրավորում է ստացել ՊԲ պայմանագրային զինծառայող, 1980թ. ծնված Նվեր Յուրիկի Բաբաջանյանը: Դեպքի մանրամասները պարզելու համար կատարվում է քննություն: [22]

Նվեր Բաբաջանյանը Արցախի Մարտունու շրջանից էր, ամուսնացած էր, ունի երկու անչափահաս երեխա: Նա ՊԲ զինված ուժերում ծառայության էր անցել 1 տարի առաջ: [23]

7. Արտակ Էդիկի Ռաֆայելյան

2017թ-ի մարտի 28-ին՝ ժամը 13:00-ի սահմաններում, ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում հակառակորդի կողմից արձակված կրակոցից մահացու վիրավորում է ստացել ՊԲ զինծառայող, 1997թ. ծնված Արտակ Էդիկի Ռաֆայելյանը: [24]

ՀՀ առաջին կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով սպանության փորձ կատարելու դեպքի առթիվ, կատարվում է նախաքննություն: [25]

Արտակ Ռաֆայելյանը Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի բնակիչ էր, ընտանիքի ավագ որդին, «Գինեսի» գրքի ռեկորդակիր էր, հուլիսին զորացրվելու էր: Նա ունի իրենից փոքր եղբայր, որն այս տարի է զորակոչվել բանակ: [26]

8. Գոռ Գևորգի Հովհաննիսյան

2017թ-ի մարտի 31-ին՝ ժամը 14:45-ի սահմաններում, ՊՆ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում, հակառակորդի կողմից

---

[20] http://investigative.am/news/view/spanutyun-spanutyan-porc-zincarayoxner.html
[21] https://news.am/arm/news/372216.html
[22] http://nkrmil.am/news/view/1766
[23] https://news.am/arm/news/376267.html
[24] http://nkrmil.am/news/view/1804
[25] http://galatv.am/hy/news/185092/
[26] https://news.am/arm/news/381459.html

հրադադարի պահպանման ռեժիմի խախտման հետևանքով, մահացու վիրավորում է ստացել ՊԲ պայմանագրային զինծառայող, 1993թ. ծնված Գոռ Գևորգի Հովհաննիսյանը: [27]

Դեպքի մանրամասները պարզելու համար կատարվում է քննություն:

Գոռ Հովհաննիսյանը ավարտել է Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտը: Գոռ Հովհաննիսյանը սպա էր, իսկ նրա հայրը Արցախյան ազատամարտի մասնակից: Գոռ Հովհաննիսյանը ընտանիքի ավագ զավակն էր, ունի իրենից փոքր ևս 2 եղբայր, որոնցից մեկը այժմ Պաշտպանության բանակում ժամկետային զինծառայող է:[28]

Բ. Դժբախտ պատահար

Ավտովթար

1. Գարեգին Հակոբի Մինասյան

2017թ-ի փետրվարի 15-ին՝ ժամը 15:00-ի սահմաններում, ՀՀ ՊՆ N զորամասի մարտական դիրք տանող ճանապարհը մաքրելիս ձորն է գլորվել զորամասին պատկանող T-170 բուլդոզերը, ինչի հետևանքով բուլդոզերում գտնվող պայմանագրային զինծառայողներ Գարեգին Հակոբի Մինասյանը, Արմեն Միխայելի Պուխան և Վրույր Ֆիրդուսի Ներսիսյանն ստացել են մարմնական վնասվածքներ:

ՀՀ ՊՆ Գեղարքունիքի կայազորային զինվորական հոսպիտալ տեղափոխվելու ճանապարհին պայմանագրային զինծառայող Գարեգին Հակոբի Մինասյանը մահացել է: ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳՎ հինգերորդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 377-րդ հոդվածի 2-րդ մասով՝ պայմանագրային զինծառայողի մահվան պատճառ դարձած վթարի դեպքի առթիվ, կատարվում է նախաքննություն:[29]

Թունավորում

2. Գարեգին Արայի Արգամանյան

2017թ-ի փետրվարի 17-ին ՊԲ կենտրոնական ենթակայության զորամասերից մեկի մշտական տեղակայման վայրում շմոլ գազի թունավորումից մահացել է զինծառայող, 1997թ. ծնված Գարեգին Արայի Արգամանյանը:[30]

ՀՀ առաջին կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝

[27] http://nkrmil.am/news/view/1810
[28] http://henaran.am/271462.html
[29] http://investigative.am/news/view/djbaxt-depq-zincarayoxner-gexarquniq.html
https://news.am/arm/news/373773.html
[30] http://nkrmil.am/news/view/1737

ժամկետային զինծառայող Գարեգին Արգամանյանի մահվան դեպքի առթիվ: Նախնական տվյալներով՝ վերջինս մահացել է բենզոազրեգատի արտանետած շմոլ գազից: Քրեական գործով կատարվել է դեպքի վայրի զննություն, դիակի արտաքին զննում, նշանակվել դիակի դատաբժշկական փորձաքննություն: Ձեռնարկվում են անհրաժեշտ քննչական գործողություններ՝ դեպքի բոլոր հանգամանքների բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ հետազոտումն ապահովելու ուղղությամբ:[31]

Գարեգին Արգամանյանը տան միակ զավակն է եղել: [32]

Գ.Ինքնասպանություն

1. Շավարշ Հակոբի Գալստյան

2017 թ-ի հունվարի 25-ին՝ ժամը 08:50-ի սահմաններում, ՀՀ ՊՆ N զորամասի պահպանության տակ գտնվող մարտական դիրքում հայտնաբերվել է պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Շավարշ Հակոբի Գալստյանը՝ ծնոտի շրջանում մահացու հրազենային վնասվածքով:[33]

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության վեցերորդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով (ինքնասպանության հասցնելը), կատարվում է նախաքննություն:[34]

Զինծառայողի դին հայտնաբերվել է մարտական դիրքի խրամաբջջում՝ դիտանցքը փակելու համար նախատեսված փայտյա կոճղի վրա ՝ նստած դիրքում, ծնոտի շրջանում մահացու հրազենային վնասվածքով: Դեպքի վայրի զննությամբ՝ զինծառայողի ոտքերի արանքում, խզակոթի մասով դեպի ներքև, իսկ փողաբերանով դեպի առաստաղն ուղղված վիճակում հայտնաբերվել է նրան ամրակցված «ԱԿՄ» տեսակի ինքնաձիգը, իսկ հատակին՝ մեկ պարկուճ:

Razm.info-ի հավաստմամբ փաստական տվյալներ են ձեռք բերվել առ այն, որ նույն հերթափոխում որպես դիտորդ նշանակված մեկ այլ զինծառայող պարբերաբար շահագործել է Շավարշ Գալստյանին և իր թվացյալ առավելությունն ու գերակայությունն ընդգծելու համար «հանձնարարել» անձնական բնույթի ծառայություններ մատուցել իրեն, այն է՝ սուրճ, թեյ պատրաստել, լվանալ աղտոտված ափսեները, բացի այդ, հայհոյել և վիրավորել է նրա արժանապատվությունը:[35]

---

[31] http://investigative.am/news/view/zinvori-mah-shmol-gaz.html
[32] http://www.tert.am/am/news/2017/02/17/soldier/2282081
[33] http://investigative.am/news/view/shavarsh-galstyan.html
[34] http://investigative.am/news/view/shavarsh-galstyan.html
[35] http://razm.info/95333

Դ. Անփույթ վերաբերմունք ծառայության նկատմամբ

1. Գոռ Ֆրունզիկի Խուդինյան

2017թ-ի փետրվարի 23-ին՝ ժամը 00:45-ի սահմաններում, ՊԲ հյուսիսային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում, դեռևս չպարզված հանգամանքներում, մահացու վիրավորում է ստացել պայմանագրային զինծառայող, 1991թ. ծնված Գոռ Ֆրունզիկի Խուդինյանը:[36]

ՀՀ երրորդ կայազորային քննչական բաժնում քննություն է տարվում՝ պարզելու պայմանագրային զինծառայող Գոռ Ֆրունզիկի Խուդինյանի մահվան հանգամանքները: [37]

Գոռ Խուդինյանը Վանաձորից էր, ամուսնացած էր, ուներ մեկ մանկահասակ երեխա:[38]

Ե. Սպանություն

Զենքի հետ վարվելու կանոնների խախտում

1. Արայիկ Իգորի Սարգսյան

2017թ-ի հունվարի 16-ին՝ ժամը 12:35-ի սահմաններում, ՊԲ հարավարևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում դեռևս չպարզված հանգամանքներում մահացու հրազենային վիրավորում է ստացել Հադրութի շրջանի բնակիչ, 1995 թ. ծնված պայմանագրային զինծառայող, Արայիկ Իգորի Սարգսյանը: [39]

ՀՀ երկրորդ կայազորային քննչական բաժնում քննվող քրեական գործով ձեռնարկված միջոցառումների արդյունքում պարզվել են պայմանագրային զինծառայող, սերժանտ Արայիկ Սարգսյանի մահվան հանգամանքները, առերևույթ հանցագործություն կատարած անձի ինքնությունը:

ՀՀ Քննչական կոմիտեի հավաստմամբ՝ քննչական գործողությունների արդյունքում ձեռք բերված փաստական տվյալների համաձայն՝ պայմանագրային զինծառայողը կյանքի հետ անհամատեղելի վնասվածքն ստացել է նույն զորամասի զինծառայողներից մեկի կողմից զենքի հետ վարվելու կանոնները խախտելու հետևանքով:

Նախնական տվյալներով՝ շարքային զինծառայողը, վերցնելով ծառայակցին ամրակցված ինքնաձիգը, մասամբ հանել է փամփշտատուփը և կատարել լիցքավորման գործողություն, ապա կարծելով, որ ինքնաձիգի փամփշտանոց փամփուշտ չի մտել,

---

[36] http://nkrmil.am/news/view/1749
[37] http://investigative.am/news/view/gor-xudinyan.html
[38] https://news.am/arm/news/374995.html
[39] http://nkrmil.am/news/view/1686

սեղմել է ձգանը: Արդյունքում՝ արձակված կրակոցից պայմանագրային զինծառայող Ա.Սարգսյանը որովայնի շրջանում ստացել է հրազենային վիրավորում և զինվորական հոսպիտալ տեղափոխվելու ճանապարհին մահացել:[40]

2. Գուրգեն Հարությունի Սարգսյան

2017թ-ի հունվարի 16-ին՝ ժամը 23:55-ի սահմաններում, ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում զենքի օգտագործման կանոնների խախտման արդյունքում հրազենային վիրավորում է ստացել զինծառայող, 1997թ. ծնված Գուրգեն Հարությունի Սարգսյանը: [41]

ՀՀ առաջին կայազորային քննչական բաժնում քննություն է տարվում՝ պարզելու ժամկետային զինծառայող Գուրգեն Սարգսյանի հրազենային վիրավորում ստանալու հանգամանքները:

Նախնական քննության տվյալներով՝ ժամկետային զինծառայող, շարքային Գուրգեն Հարությունի Սարգսյանը գլխի շրջանում հրազենային վիրավորում է ստացել հունվարի 16-ին՝ ժամը 23:55-ի սահմաններում, N զորամասի պահպանության տակ գտնվող մարտական դիքում հերթապահություն իրականացնելիս՝ կրտսեր սերժանտի կողմից զենքի հետ վարվելու կանոնները խախտելու հետևանքով: 2017թ-ի մարտի 1-ին ժամը 14:10 Հայաստանի պաշտպանության նախարարության կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալում մահացել է Գուրգեն Սարգսյանը:[42]

Զ. Առողջական խնդիրներ

1. Սարգիս Սամվելի Ափինյան

2017թ-ի հունվարի 26-ին ՊՆ N զորամասի տարածքում հանկարծամահ է եղել 1998թ-ին ծնված ժամկետային զինծառայող Սարգիս Սամվելի Ափինյանը:[43]

ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳՎ չորրորդ կայազորային քննչական բաժնում քննություն է տարվում՝ կուրսանտ Սարգիս Ափինյանի մահվան հանգամանքները պարզելու համար: [44]

ՀՀ քննչական կոմիտեի հաղորդագրության համաձայն՝ նախնական տվյալներով՝ 26.01.2017 թվականին՝ ժամը 16:20-ի սահմաններում, ՀՀ ՊՆ N զորամասի պարտադիր ժամկետային զինծառայող, կուրսանտ Սարգիս Ափինյանի ինքնազգացողությունը զորամասի շարահրապարակում կտրուկ վատացել է: Նա տեղափոխվել է զորամասի

[40] http://investigative.am/news/view/serjant-arayik-sargsyan.html
[41] http://nkrmil.am/news/view/1685
[42] http://galatv.am/hy/news/182211/
[43] http://www.mil.am/hy/news/4604
[44] http://www.azatutyun.am/a/28262347.html

բուժկետ, որտեղ ժամը 17:35-ի սահմաններում վերջինիս մոտ գրանցվել է կենսաբանական մահ: Նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն:[45]

Սարգիս Ափինյանի մահվան պատճառը, ըստ դատաբժշկական քննության, «սուր սրտային անբավարարություն՝ չճշտված, թոքային այտուց» է եղել: Այս մասին գրում է ՀՀ Քննչական կոմիտեն:[46]

Է. Դեռևս չպարզված հանգամանքներ

1. Լեոնիկ Ալեքսանդրի Օսյան

2017թ-ի փետրվարի 18-ին՝ ժամը 11.45-ի սահմաններում ՊԲ հարավային ուղղության զորամասերից մեկի պահպանության տեղամասում, դեռևս չպարզված հանգամանքներում, մահացու հրազենային վիրավորում է ստացել ժամկետային զինծառայող, 1998թ. ծնված Լեոնիկ Ալեքսանդրի Օսյանը:[47]

ՀՀ երկրորդ կայազորային քննչական բաժնում քննություն է տարվում՝ պարզելու ժամկետային զինծառայող Լեոնիկ Ալեքսանդրի Օսյանի մահվան հանգամանքները: Պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Լեոնիկ Ալեքսանդրի Օսյանը գլխի ճակատային շրջանում մահացու հրազենային վնասվածքով հայտնաբերվել է փետրվարի 18-ին՝ ժամը 11:45-ի սահմաններում, N զորամասի պահպանության շրջանի մարտական դիրքում:

Նախնական տվյալներով՝ մահացու վնասվածքը Լ. Օսյանը ստացել է իրեն ամրակցված գնդացրով:

ՀՀ Քննչական կոմիտեի հավաստմամբ՝ ձեռնարկվում են անհրաժեշտ քննչական գործողություններ՝ դեպքի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտումն ապահովելու ուղղությամբ:[48]

Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանն ստորագրել է հրամանագիր, համաձայն որի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական սահմանը պաշտպանելիս ցուցաբերած արիության համար ԼՂՀ պաշտպանության բանակի 7 զինծառայող հետմահու պարգեւատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով:

---

[45] http://investigative.am/news/view/sargis-apinyan.html
[46] http://investigative.am/news/view/apinyan-mahvan-patchar.html
[47] http://nkrmil.am/news/view/1740

[48] http://investigative.am/news/view/lernik-osyan.html